

# «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

#### «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Նոտարիատի մասին» 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 5-րդ մասից «ճզմիչ կնիքը» բառերը, ինչպես նաև նշված բառերից առաջ առկա «և» տառը, 17-րդ հոդվածի 8-րդ մասում առաջին անգամ հիշատակվող «ճզմիչ կնիքը» բառերից առաջ՝ «և» տառը, երկրորդ անգամ հիշատակվող նույն բառերից առաջ՝ «ու» տառը, ինչպես նաև 36.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «ճզմիչ կնիքը» բառերից հետո առկա ստորակետը հանել:

**Հոդված 2.** Օրենքի 36.1 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը «կնիքը» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«արձագանքման կողը և հսկիչ համարը, որոնց միջոցով հնարավոր է ստուգել փաստաթղթի իսկությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից տրամադրվող պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական [www.e-verify.am](http://www.e-verify.am) կայքում»:

**Հոդված 3.** Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի 2-րդ նախադասության մեջ «եթե հետախուզման որոշում կայացրած անձից կամ մարմնից կամ արդարադատության նախարարությունից» բառերից հետո լրացնել «իսկ դիվանագիտական ծառայության մարմիններում նոտարական գործողությունները կատարելու դեպքում՝ հյուպատոսական էլեկտրոնային համակարգի միջոցով» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 54-րդ հոդվածի վերնագրում 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում «դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները» բառերը փոխարինել «դիվանագիտական ծառայության մարմիններ» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի «նրանց ղեկավարները» բառերը փոխարինել «հյուպատոսի և փոխհյուպատոսի պարտականությունները կատարող անձինք» բառերով:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հոդված 7.** Ուժը կորցրած ճանաչել արդարադատության նախարարի 07.09.2010 թվականի «Հայաստանի Հանրապետության նոտարների կողմից վավերացվող փաստաթղթերում ճգմիչ կնիքների օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 178-Ն հրամանը: